


Հիշողությունն ընդդեմ մոռացության



Ապրիլի 27-ին Գորիսի պետական համալսարանի Հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների ֆակուլտետի պատմության ամբիոնի՝ Հայոց ցեղասպանության 103-րդ տարելիցին նվիրված «Հիշողությունն ընդդեմ մոռացության» խորագրով կոնֆերանսի բանախոսները.

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի «Հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության» բաժնի վարիչ, Գորիսի պետական համալսարանի դասախոս, պ.գ.դ., պրոֆեսոր Գևորգ Ստեփանյան

Թեմա՝ Հայերի կոտորածները Բաքվի նահանգում և թուրք-ադրբեջանական իշխանությունների պատասխանատվությունը (1918 թ. սեպտեմբեր-1920 թ. ապրիլ) :

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի «Հայկական հարցի և հայոց ցեղասպանության» բաժնի վարիչ, պ.գ.դ. Արմեն Մարության

Թեմա՝ Ցեղասպանության հետևանքների հաղթահարման պատմաիրավական հիմքերն ու հիմնախնդիրները:



Արմեն Մարուքյան

1998 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: 1998-2001 թթ. սովորել է ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրայում: 2002 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Ռուսաստանի քաղաքականությունը Հայկական հարցում 1915-1917 թթ.» թեմայով, ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2018 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման պատմական և իրավաքաղաքական հիմքերը» թեմայով:



Գևորգ Ստեփանյան

1992 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության և աշխարհագրության ֆակուլտետը: 1992-1996 թ. սովորել է նույն ինստիտուտի ասպիրանտուրայում՝ հայոց պատմություն մասնագիտությամբ: 1996 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի և Արեշ գավառներում 1918-1920 թթ» թեմայով և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2009 թ. պաշտպանել է դոկտորական թեզ՝ «Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբներին» (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն) թեմայով և ստացել պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: